Պարոն/Տիկին _____ ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան_____

«29» 04 2024թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Կամո Սարգսյան,
   - Արա Նռանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի անդամ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆլորենցիա, Իտալիա 2024 թվականի ապրիլի 22-23-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Ջրի կարգավորողների եվրոպական ասոցիացիա (WAREG):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցություն Եվրոպայում ջրամատակարարման կայունության և ներդրումների վերաբերյալ եվրոպական համաժողովին և WAREG-ի 31-րդ ընդհանուր ժողովին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ WAREG-ի 31-րդ ընդհանուր ժողովին մասնակցում էին WAREG-ի անդամ երկու տասնյակից ավել երկրներ, որոնք ակտիվ մասնակցում են WAREG-ի շրջանակում իրականացվող աշխատանքներին:

Եվրոպայում ջրի հասանելիության և ներդրումների վերաբերյալ եվրոպական համաժողովին իրենց ելույթներով հանդես եկան Ֆլորենցիայի կարգավորման դպրոցի

նախագահը, Ֆլորենցիայի քաղաքապետը, Տոսկանայի շրջանի նախագահը, Իտալիայի գյուղատնտեսության նախարարը, Իտալիայի կարգավորող մարմնի (ARERA) նախագահը:

Ծավալվեցին քննարկումներ կլոր սեղան ձևաչափով:

Ընդհանուր ժողովում մասնակիցներին ներկայացվեցին WAREG-ի անդամ երկրներում Եվրոպական միության աջակցությամբ իրականացված ծրագրերի հաշվետվությունները: Դրանց թվում էին՝

Ռումինիա- Եվրոպական միության աջակցությամբ Ջրային օրենսդրության իրավական ոլորտի բարեփոխումների իրականացման ծրագրեր,

Էստոնիա- Եվրոպական միության աջակցությամբ ֆինանսական կառավարման և սակագների կարգավորման վերաբերյալ իրականացված ծրագրեր,

Խորվաթիա- Եվրոպական միության աջակցությամբ և WAREG-ի կողմից իրականացված ջրի կորուստների նվազման և կառավարման ծրագրեր:

WAREG-ի 31-րդ ընդհանուր ժողովի ընթացքում Ֆլորենցիայի կարգավորման դպրոցը հանդես եկավ WAREG-ի և Ֆլորենցիայի կարգավորման դպրոցի համատեղ հետազոտությամբ՝ ջրային ոլորտում կլիմայի չեզոքության վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի ընթացքում հաստատվեցին 30-րդ Ընդհանուր ժողովի արձանագրությունը և 31-րդ Ընդհանուր ժողովի օրակարգը:

Ներկայացվեց WAREG-ի 2023 թվականի ֆինանսական և կառավարման զեկույցը: Որոշվեց հաջորդ Ընդհանուր ժողովն անցկացնել սույն թվականի հունիսին Սկոպյեում, Մակեդոնիա:

7.Հանդիպումները, ելույթները՝ Ժողովի ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպել են WAREG-ի նախագահ, Իտալիայի կարգավորող մարմնի՝ ARERA-ի անդամ Անդրեա Գերինիի հետ: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Գերինին, որպես WAREG-ի նախագահ, պատրաստակամություն հայտնեց ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ջրային ոլորտին առնչվող փաթեթի ներկայացման դեպքում միջնորդել և գործնական քայլեր ձեռնարկել Եվրոպական միության կողմից համապատասխան ֆինանսական և տեխնիկական աջակցություն ստանալու հարցում: Ծրագիրն իրականացվելու է Եվրոպական միության աջակցությամբ, իսկ հայկական կողմն ազատ է ներկայացնելու առաջարկներ ջրային ոլորտում իր հետաքրքրությունների և առաջնահերթությունների շրջանակից:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները՝ Հանդիպման ընթացքում որոշում կայացվեց հաջորդ Ընդհանուր ժողովն անցկացնել սույն թվականի հունիսին Սկոպյեում, Մակեդոնիա:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով հանդիպումների արդյունքները՝ առաջարկում ենք WAREG ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջարկների փաթեթը՝ WAREG-ի նախագահ Անդրեա Գերինիի միջնորդությամբ դրանք Եվրոպական միություն ներկայացնելու և վերջինիս աջակցությունն ստանալու համար:

Գործուղվող 29.04.24թ. ---------- ***Կ. Սարգսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող 29.04.24թ. ---------- ***Ա. Նռանյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 146-ՀՆ, 05.03.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

ՀՀ ՀԾԿՀ հանձնաժողովի անդամներ՝ **Կամո Սարգսյան** և **Արա Նռանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք. **Ֆլորենցիա** / Իտալիա /

5. Գործուղման ժամկետները՝ **21.04.2024 -24.04.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ օրապահիկ , ճանապարհածախս, գիշերավարձ:

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կամո Սարգսյան	Արա Նռանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	344,798	344,798	689.596
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	142.08	142.08	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	59,209	59,209	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	177,627	177,627	355.254
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	97	97	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	42,623	42,623	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	170,491	170,491	340.982
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		692.916	692.916	1,385.832

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 29.04.2024թ.